ԵՐԿՎՈՐՅԱԿՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պատմ. գիտ. թեկնածու Հ. Ռ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Գեղամա և Սյունյաց լեռների մ. թ. ա. II—I հազ. ժայռապատկերներում հանդիպում են կողք-կողքի փորագրված երկու մարդակերպ կերպարանքներ՝ կենդանիներ ու լուսատուներ խորհրդանշող երկրաչափական նշանների միջավայրում կանգնած։ Սյունիքի ժայռապատկերներում դրանք ներկայացված են մի ձեռքը բարձրացրած, մյուսն իջեցրած, ոտքերը տարածած դիրքով[1]։ Ուխտասարի մի ժայռապատկերում մարդակերպ այս զույգի հետ հանդես են գալիս նաև «մարդ» նախնադարյան գաղափարագրի իրար մոտ դրված երկու նշան (աղ. I, 1), որոնք կրկնվում են ուրարտական նշանագրերում, ինչպես նաև հայ նշանագրերի միջնադարյան ցուցակներում՝ կլխիվայր շրջված ձևով։ Այստեղ դրանք ունեն «երկվորյակ» բացատրությունը, որի հիման վրա էլ Հ. Մարտիրոսյանը նախնադարյան և ուրարտական նշված զույգ գաղափարագրերը մեկնաբանում է իբրև «Երկվորյակ»-ի նշաններ[2]։ Դա մեզ իրավունք է տալիս մարդակերպ այս զույգ պատկերներն ընդունել իբրև «Երկվորյակ» աստվածություններ[3], որոնց պաշտամունքը լայն տարածում է ունեցել և՛ բրոնզեդարյան Հայաստանում, և՛ Հին աշխարհի շատ երկրներում։

Առաջավոր Ասիայում երկվորյակների պաշտամունքի հետքերի օրինակ կարող է տալ Թել-Բրակի էայի տաճարում հայտնաբերված երկվորյակներով հղի մայր աստվածուհու արձանիկը[4]։ Երկվորյակների պատկերներ հանդիպում են նաև Նիհավանդից և Թեփե Գիյանից գտնված պահպանակների ու կնիքների վրա[5], նրանց կերպարները հանդես են գալիս նաև Բաբելոնի և Ասորեստանի ժողովուրդների կրոնական պատկերացումներում[6], եգիպտական, ուրարտական արվեստում և այլն։ «Երկվորյակ» աստվածությունների պաշտամունքը առավել ծաղկում ապրեց հնդեվրոպական ժողովուրդների միջավայրում և իր արտացոլումը գտավ դրական այնպիսի հին հուշարձաններում, ինչպիսիք են հին հնդկական վեդայական հիմները (մ. թ. ա. II հազ. I կես), հին հունական առասպելները։ Հայաստանում այս աստվածությունների կերպարները պահպանվել են «Սասնա ծռեր» դյուցազնավեպում։ Մենք այսօր

---

1 Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Երևան, 1970, նկ. 56, 1, 52, 2, 115, 131, 2, 308, 2, 39, 1, 41, 1։ Հեղինակները դրանք մեկնաբանում են իրրև պարող զույգ (էջ 30)։

2 Հ. Ս. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, 1973, էջ 31։

3 А. Р. Исраелян, Наскальные изображения Армении и семантика некоторых композиций (II международный симпозиум по армянскому искусству). Ереван, 1978.

4 M. El. Mallowan, Early Mesopotamia and Iran, London, 1965, նկ. 40։

5 P. Amiet, La gliptique Mesopotamienne archaique, Paris, 1961, աղ. 4, նկ. 88։ E. E. Herzfeld, Iran in the Ancient East, London, New-York, 1941, նկ. 124։

6 B. Messner, Babylonien and Assyrien, Heidelberg, 1925, էջ 36։

ունենք «Երկվորյակ» աստվածների պատկերներ միայն Գեղամա և Սյունյաց լեռներից, իսկ նրանց էությունը բացահայտող առասպելներ՝ Սասունից ու Վանի շրջակայքից, այսինքն Արևմտյան Հայաստանի հարավային մասից, մի հատված, որը պատմական հնագույն շրջանում գտնվում էր առաջավորասիական քաղաքակրթության ոլորտներում[7]։ «Երկվորյակ» աստվածների պաշտամունքը լայնորեն տարածված էր նաև աշխարհի տարբեր մասերում



Աղ. I

ապրող հետամնաց ցեղերի մեջ։ Ազգագրական և բանահյուսական տվյալների համաձայն ամենուրեք նրանց վերագրել են եղանակ կարգավորելու, անձրև առաջացնելու կարողություններ, հետևաբար նրանց պաշտամունքը կապված է եղել բնության երևույթների՝ հատկապես անձրևի, ջրի գաղափարի հետ։ Աստվածային այս էակները, իբրև համաստեղություններ, հնուց ի վեր կենդանակամարում տեղ էին զբաղեցնում խոյից և ցուլից հետո, իբրև անձրևաբեր և հողը արգասավորող համաստեղություն։

Գեղամա և Սյունյաց լեռների երկվորյակ աստվածների պատկերներում հատկապես շեշտված են թևերը։ Դրանք երկար են, շարժուն և ուժեղ, մինչ-

7 Ա. Սահակյան, «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Երևան, 1975, նույն՝ «Սասնա ծռեր», աշխատությամբ Ս. Հարությունյանի, Երևան, 1977, էջ 619։

դեռ ոտքերը մեծ մասամբ կարճ են կամ առհասարակ բացակայում են (աղ. I, 5, 6)։ Սրանից կարելի է կռահել, որ երկվորյակներն իրենց գլխավոր ֆունկցիան, հների պատկերացմամբ, կատարել են ձեռքերի միջոցով[8]։ Ժայռապատկերներում երկվորյակները ներկայացված են իբրև երկնային էակներ։ Ուխտասարի մի հորինվածքում «Երկվորյակները» գտնվում են «երկնանշանի», այծերի, մարդու, երեք շրջանների՝ լուսատուների միջավայրում (աղ. I, 2)։ Նույնը կարելի է նկատել նաև Ուխտասարի մի այլ պատկերում, որտեղ «երկվորյակները» ներկայացված են ցուլի, մարդակերպ էակների և երկնային զանազան գաղափարանշանների հետ (աղ. I, 3)։ Ցուլն այստեղ վկայում է, որ հորինվածքը կապված է ամպրոպ-կայծակի, երկրաշարժության ու պտղաբերության գաղափարի հետ[9]։ Ինքնըստինքյան հասկանալի է դառնում, որ եթե երկվորյակները կապ ունեին անձրևի հետ, ապա նրանք անմիջականորեն առնչվում են նաև ամպրոպ-կայծակին և այն մարմնավորող աստվածություններին։ Ուստի և ժայռապատկերներում ցուլի, այլ դեպքերում նաև կայծակ-այծերի առկայությունը երկվորյակների կողքին՝ միանգամայն տրամաբանական է։

Ինչպես ցույց է տվել Ս. Աբեղյանը «Սասնա ծռերում», դյուցազնական երկվորյակներ Սանասարն ու Բաղդասարը նույնպես կապված էին ամպրոպ-կայծակի՝ երկնային տարերքի երևույթների հետ[10]։ Նրանք սաղմնավորվել են ջրից, ծնվել ամպրոպ-կայծակի աստվածուհուց (որը որոշ պատումներում Սասնա թագավոր Աստղիկի դուստրն է)[11] և ունեն նույն հատկությունները։ Այս առումով էպոսի երկվորյակ աստվածությունները հիշեցնում են հնդկական և հունական երկվորյակ աստվածներին՝ Աշվիններին և Դիոսկուրներին։ Դիոսկուրները համարվում էին Զևսի զավակները, իսկ Աշվինները, երկնքի ծնունդ լինելով, ամենուրեք հետևում էին ամպրոպ-կայծակի աստծուն՝ Ինդրային[12]։

Մեզ թվում է, որ Սանասար-Բաղդասարի կերպարներում, փաստորեն, միախառնված են երկվորյակների և ամպրոպ-կայծակի աստվածությունները։ Թե որքանով են դրանք անջատված եղել իրենց սկզբնական շրջանում, դժվար է ասել, սակայն բնական է այն, որ միաձուլվել և միևնույն կերպարի մեջ մարմնավորվել են միմյանց հետ օրգանապես կապված երկու աստվածություններ։ Դրանք ամպրոպ-կայծակի և անձրևի երևույթները մարմնավորող աստվածություններ են։

Երկվորյակների անձրևաբեր հատկությունը երևում է Սև սարի մ. թ. ա. II հազ. մի ժայռափոր վիթխարի կոմպոզիցիայում (աղ. I, 4), որը Հ. Մարտիրոսյանի կողմից հանգամանորեն վերծանված է իբրև արեգակնա-լուսնա-

---

8 Հետաքրքիր է, որ Բրիտանական Կոլումբիայում բնակվող կվակիուտլ ցեղի հավատալիքներում. երկվորյակ մանուկները (նորածինները) ընդունակ են իրենց թաթիկների մի շարժումով առաջ բերել քամի, անձրև կամ լավ եղանակ (Дж. Г. Фрезер, Золотая ветвь, М.—Л., 1931, էջ 83—85)։

9 Հ. Ռ. Իսրայելյան, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 89 և հտ.։

10 Մ. Աբեղյան, Երկեր, հատ. 1, Երևան, 1966, էջ 78—79։

11 «Սասնա ծռեր», պատում ԻԴ, էջ 1028, § 2, էջ 1031, 1032, § 7։

12 Л. Штернберг, Первобытная религия в свете этнографии, Л., 1936, էջ 75—76։

յին նախնադարյան տոմար[13]։ Աստղային այս քարտեզի վրա երկվորյակները պատկերված են վեր պարզած ձեռքերում օձ-կայծակներ բռնած և նույն օձ-կայծակների խառնիխուռն բազմության մեջ, «որոնք կարծես պատկերում են կատաղի, անհանգիստ երկնակամարը՝ արև-կայծակի աստվածների կռվի պահին»[14]։ Երկվորյակ աստվածները, կոմպոզիցիայի տվյալ հատվածում, ուղեկցվում են արևի և կիսալուսնի պատկերներով, որոնց հետ անքակտելիորեն կապված են իրենց էությամբ։ Այդ առումով նշված կոմպոզիցիան ինչ-որ հեռավոր կապի մեջ է հայ ժողովրդական դյուցազներգության կիսաստված երկվորյակների հետ։ Հորինվածքում պատահական չէ նաև ձիու առկայությունը։ Արևի աստվածության խորհրդանիշ լինելուց բացի, ձին հնագույն կրոնապաշտամունքային պատկերացումներում անբաժանելի է երկվորյակ աստվածներից։ Հնդկական Աշվիններն ու հունական Դիոսկուրները սկզբնապես ունեցել են ձիու կերպարանք։ Թե՛ մեկը, թե՛ մյուսը համարվել են Ինդրայի և Զևսի զավակ-նժույգները[15]։ Ինքը՝ Աշվին անունը նշանակում է ձի։ Հետաքրքիր է, որ մեր էպոսի պատումներից մեկում երկվորյակ եղբայրների մայրը հղիանում է ձիու սմբակի տեղում գոյացած ջուրը խմելուց[16], իսկ երկվորյակ դյուցազուններին ուղեկցում է հրեղեն ձին՝ Քուռկիկ Ջալալին, որն օժտված է նույն երկնային տարերքի հատկանիշներով։ Հնագիտական նյութերը հաստատում են ուսումնասիրողների այս կարծիքը։ Դաղստանում հայտնաբերված զույգ հեծյալների բրոնզե արձանիկը[17] (II հազ. վերջ և I հազ. սկիզբ) վերը ասվածի ուղղակի ապացույցն է։ Հնագիտական այլ առարկաների վրա ևս (բրոնզե գոտիներ) դրսևորվում է նույն գաղափարը։

Հաջորդ կոմպոզիցիայում (աղ. I, 5) երկվորյակները պատկերված են երկու զույգով։ Առաջինը՝ ավելի սխեմատիկ ձևով. ձեռքերի մեջ ծանոթ դիրքով։ Հնարավոր է, որ սրանք ունեցել են երկվորյակներ նշանակող գաղափարագրի իմաստ, մինչդեռ երկրորդ զույգը ռեալիստական է, նույն շարժման մեջ պատկերված ձեռքերում կարծես մահակներ բռնած։ Նրանք գտնըվում են կենդանիների և մարդու միջավայրում։ Երկվորյակների երկու զույգն էլ ուղեկցվում են լուսնի պատկերով, որի առկայությունն այստեղ որոշակի նշանակություն ունի, որովհետև երկվորյակները, անձրևաբեր էակներ լինելով, կապվում էին նաև լուսնի հետ. «Քանզի այս գոտին, որ կիսալուսին է համակարգի, սա է դայեակ անձրևաց և սնուցիչ բուրաստանաց»,— գրում է Շիրակացին[18]։

Եթե Սև սարի «աստղային քարտեզում» երկվորյակները հանդես են գալիս աստղային ամբողջական համակարգությունների ուղեկցությամբ, ապա որոշ տեղերում վերջիններիս փոխարինում է առանձին աստղ կամ աստղանշան։ Այսպես, Ուխտասարի մի ժայռանկարում (աղ. I, 6) «երկվոր-

---

13 Հ. Ա. Մարտիրոսյան, Նախնադարյան Հայաստանի արևգակնա-լուսնային տոմարը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.) 1977, № 7, էջ 32, աղ. 8։

14 Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան, Դեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, 1971, էջ 18, նկ. 145։

15 Л. Штернберг, նշվ. աշխ., էջ 79—81։

16 «Սասնա ծռեր», պատում ԲԴ, էջ 1031։

17 Е. Е. Кузьмина, Навершие со всадником из Дагестана, СА, 1973, № 2.

18 Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 325—326։

յակներն» իրարից բաժանված են աստղանշանով։ Շտերնբերգի դիպուկ բնորոշմամբ «ամեն մի երկվորյակի ծնունդը առիթ էր մի նոր պաշտամունքային առարկայի ստեղծման, ամեն մի երկվորյակ իր ծննդյան օրից և իր ծնունդով աստվածային էակ է։ Այսպիսով, երկվորյակների պաշտամունքը դառնում է երկրպագվող մարդկանց պաշտամունք։ Շատ ժողովուրդների և ցեղերի մոտ երկվորյակները զուգորդվում են երկնային լուսատուների հետ (արև-լուսնի և այլն)»[19]։ Մի քանի կոմպոզիցիաներում երկվորյակները պատկերվել են գլխի մոտ լուսատու շրջանակների պսակով (աղ. I, 7), ներկայանալով իբրև լուսատուներ։ Նրանք հանդես են գալիս հորիզոնական տարածած թևերով, երկու այծի հետ։

Ըստ էության, սրա նման է նաև մյուս (աղ. I, 8) կոմպոզիցիան, որտեղ, ի տարբերություն նախորդի, մի շրջանակը գտնվում է երկվորյակներից մեկի ուսի մոտ, իսկ մյուսը՝ մեկական շրջանակ ունի գլխի և ոտքի մոտ։ Անկասկած, լուսատուների դիրքի փոփոխությունը կարևոր նշանակություն է ունեցել նախնադարյան աստղագուշակների համար։ Դրանց դիրքին և շարժմանը համապատասխան արվում էին զանազան գուշակություններ՝ կապված եղանակի փոփոխման, ցանքսի, մարդկանց ու կենդանիների ծննդի, մահվան, գիշերը անասունը տեղափոխելիս ճանապարհների ուղղությունը ճիշտ որոշելու, արևի ու լուսնի խավարումների և այլ երևույթների հետ։

Երկվորյակներ պետք է համարել նաև Սյունիքի մի կոմպոզիցիայում պատկերված մարդկային երկու կերպարները, որոնք ունեն հորիզոնական տարածած ձեռքեր և օղակով ավարտվող իրաններ (աղ. I, 9)։ Սրանց միջև պատկերված է այծ՝ իրանի մոտ իրար կիպ կպած երկու խաչերով։ Այծը կայծակը խորհրդանշող կենդանի է[20], իսկ զույգ խաչը ճշտությամբ համապատասխանում է Շիրակացու այն տեղեկությանը, ըստ որի, երկվորյակներն ունեն երկու աստղ[21]։ Սյունիքի մի այլ ժայռանկարում պատկերված են այդ «օղակավոր» երկվորյակները՝ ճիշտ նույն ձևով տարածած ձեռքերով[22]։

Շատ հնարավոր է, որ երկվորյակներին պատկանող և նրանց խորհրդանշող երկու աստղը մեր նախնիների կողմից ևս զուգորդվում էին գիշերվա (լուսին, գիշերային աստղ) և ցերեկվա (արև, արշալույս) լույսի հետ։

Շ. Սոսեյը հնդկական Աշվինների մասին այն միտքն է հայտնում, որ, հավանաբար, նրանք կապված են եղել որևէ լուսային երևույթի հետ, օրինակ՝ իրիկնամուտի, կրելով երկակի բնույթ։ Նրանց ուղեկցում է Ուշասը՝ կարմրաթուշ աղջիկը, արշալույսի աստվածուհին, որի հայտնվելը նշանակում է օրվա սկիզբ։ Նա երկնքով քշում է կարմիր ամպային կովերին և անցնելով իր ճառագայթավոր կառքով՝ ուղի է հարթում արևի համար[23]։ Սրան շատ մոտ պատկեր ենք գտնում և «Սասնա ծռերում». «Երիկվորե որ գուբեր չուրմի կես գիշեր, Սանասարն նոբաղարություն կ'եներ։ Ենդոնց եդն էլ

---

19 Л. Штернберг, նշվ. աշխ., էջ 82։

20 Հ. Իսրայելյան, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, «Տարերքի պաշտամունքը» դյուխը։ Հ. Ա. Մարտիրոսյան, Հայաստանի նախնադարյան նշանագրերը, էջ 21, աղ. V։

21 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 331։

22 Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, նշվ. աշխ., նկ. 189, 1։

23 Шантепи де-ля-Сосей, История религии, т. II, СПб., էջ 24—25։

Բաղդասարն գ'ելներ չուր մի լուսուն կը մոտներ. աղոթրընի մոտն էլ՝ մերն կ'ելներ, եկեցի կ'եներ, չուր մի լուբ մի լուսունան կը մոտներ, շիտակ լուս կու բացվեր։ Լուսն որ կը բացվեր, արեվն կ'առներ, կ'ելնին ուրանց ղաթար-





10





11





12

Աղ. II

ղութուր կը բառնին, կ'երթին ուրանց ճամբխուն...

Զուրի կես գիշերն Սանասարն կը քաշեր։ Եկավ Բաղդասարի դորն...»[24]։

24 «Սասնա ծռեր», հատ. Ա, խմբագրեց պրոֆ.-դր. Մանուկ Աբեղյան, աշխատակցությամբ Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1936, պատում Դ, էջ 140—141, § 4։

Այստեղ չափազանց հետաքրքիր է նաև նրանց մոր՝ ամպրոպ-կայծակի աստվածուհի Ծովինարի կերպարում արշալույսի աստղի ֆունկցիայի բացահայտումը։ Եթե հնդկական Աշվիններին համար արշուլույսի աստղի դերը կատարում էր իրենց քույրը՝ Ուշասը, ապա այստեղ արշալույսը մարմնավորում է նրանց մայրը՝ «Աստղիկ թագավորի դուստրը», ինչպես անվանվում է նա որոշ պատումներում[25]։ Նրա հետ անքակտելիորեն կապված են երկվորյակ եղբայրները։

Աշվինների հետ ունեցած զուգահեռների շնորհիվ պարզ է դառնում էպոսում որոշ առասպելների (հատկապես հնդեվրոպական ակունքներ ունեցող) վերջնական ձևավորման ժամանակը (մ. թ. ա. II հազ.), որը լիովին համընկնում է երկվորյակների պատկերներ արտահայտող մեր ժայռափոր կոմպոզիցիաների թվագրությանը։ Գեղամա և Սյունյաց լեռների ժայռապատկերների երկվորյակները, ոճական չնչին տարբերություններով, հանդես են գալիս լուսատուների խորհրդանիշների ուղեկցությամբ կամ իբրև լուսատուներ։ Մյուս կողմից նրանք մշտապես գտնվում են ջրի, ամպրոպ-կայծակի գաղափարներն արտահայտող կենդանիների միջավայրում։

Երկվորյակներին՝ իբրև անձրևաբեր և եղանակ կարգավորող էակների, հանդիպում ենք նաև մ. թ. ա. XI—X դդ. պատկանող բրոնզե մի քանի գոտիներում, որոնց վրա դրվագված հարուստ կոմպոզիցիաների վերլուծությունը համոզում է, որ դրանք ևս կապված են աստղային երկնքի և տիեզերական պատկերացումների հետ։

Բրոնզե այս գոտիները գտնվել են Սամթավրոյի ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանին (XI—X դդ.) պատկանող դամբարաններում։ Դրանք հրատարակել է Ն. Ուրուշաձեն[26]։

Առաջինը № 276 դամբարանից գտնված գոտին է (աղ. II, 10), որը չորս շարք վազող պարույրներով բաժանված է երկու մասի։ Գոտու ծայրերը եզրափակվում են անկյունավոր վեցական գծերով, որոնց արանքները լցված են պարույրներով, շեղանկյուններով, հյուսված գծերով և զիգզագներով։ Սուրանկյուն կազմող արտաքին գծերը գագաթներում ավարտվում են խաչերով։ Գոտու վերին շարքում պատկերված է ձուկ, առյուծ, իրար պոզահարող երկու եղջերու, ձի, մարդակերպ զույգ էակներ, վարազ, բադ, այնուհետև պոզահարող երկու եղջերուն կրկնվում են, դրան էլ հաջորդում են մի չրասամույր (ջրշուն) և ձուկ[27]։ Ստորին շարքում առկա են ձուկը, չորս եղջերու, ծնկած աղեղնավորը, բադը, ապա իրար դիմաց նստած մարդակերպ նույն զույգը, ձիու նմանվող կենդանին և իրար կիպ կպած երկու մարդուկը, որոնք հաջորդ պատկերում հայտնվում են որպես հնձյալներ։ Լուսատուի նշանը նրանց բաժանում է արջի, բադի, այծեղջյուրի և ձկան պատկերներից։ Մեր կարծիքով, գոտու վրա մի քանի անգամ կրկնվող մարդակերպ զույգը երկվորյակներն են։ Այս պատկերները հաճախ ուղեկցվում են լուսատուների խորհրդանիշերով։ Եղջերուներն ու արջը իրենց վրա կրում են ոճավորված այծի՝ «փայլակ» գաղափարանշանը։

---

25 «Նասնա ծուռ», պատում IV, էջ 1028, § 2, էջ 1031—1032, § 7։

26 ᲣᲠᲣᲨᲐᲫᲔ. ᲒᲠᲘᲒᲝᲚᲘᲡ ᲡᲐᲠᲬᲧᲚᲘᲡ ᲡᲐᲛᲗᲐᲕᲠᲝᲓᲐᲜ ᲡᲐᲑᲭᲝᲗᲐ ᲖᲔᲚᲝᲕᲜᲔᲑᲐ, 1969, № 12.

27 Գոտիների վրա պատկերված կենդանիների տեսակները որոշել է պալեոկենդանաբան Ա. Մնեջումյանը։

Վերին շարքում եղջերուներին հետևող երկվորյակները նիզակահարում են կենդանիներից մեկին։ Երկվորյակներից մեկը հեծյալ է, մյուսը՝ հետիոտն։ Վարազի իրանը ծածկված է ուղղահայաց զուգահեռ գծերով և ուլիեֆ կլոր գնդիկներով։ Իրար պոզահարող եղջերուները ուղեկցվում են աստղերով։ Ստորին շարքում եղջերուի ձագերին նետահարում է աղեղնավորը, մինչդեռ երկվորյակները գտնվում են խրախճանքի մեջ՝ նրանցից մեկը սափորից հեղուկ է լցնում մյուսի գավաթը։

Այս գոտու վրա երկվորյակներից յուրաքանչյուրին ուղեկցում է ճառագայթավոր մի աստղ, որոնք գտնվում են ճիշտ նույն դիրքում, ինչ որ եղջերուներին ուղեկցող աստղերը։

«Փայլակ» գաղափարանշանը կրող եղջերուները իրար պոզահարելով առաջացնում են ամպրոպ-կայծակ, որին հետևում է անձրևը։ Այն մարմնավորում է եղջերուների միջև պատկերված ձուկը։ Հետաքրքիր է, որ դեռևս VII դարից մեզ հասած տվյալները, որոնցից շատերը հիմնված են նախնադարյան տիեզերական պատկերացումների և աստղագիտության վրա, միանգամայն հաստատում են մեր այս դիտողությունը։ Շիրակացին գրում է. «Ձուկը՝ աստեղք հինգ, մին՝ յորդ անձրևաց նշանակիչ...»[28]։

Իբրև անձրև բերող էակներ երկվորյակները, ինչպես վերը նշվեց հրնդկական Աշվինների կապակցությամբ, մշտապես հետևում են ամպրոպ-կայծակի աստվածներին։ Այս գոտու վրա ևս դրսևորված է նույն գաղափարը։ Եթե մի դեպքում երկվորյակները անձրև առաջացնելու համար նետահարում են կայծակնաբեր եղջերուներին, ապա մյուս դեպքում՝ նրանք հետևում են աղեղնավորին։ Վերջինիս մասին Շիրակացին գրում է. «Աղեղնավորը, յորում են աստեղք վեց, եթե տեսանիցես զնոսա ի թրթռմանց, գիտասջիր, թե առաքին ի նոցանէ աստեղք հանդոյնք, ծովք խռովին, և ամպքն զուարճանան»[29]։ Փոթորիկը մարմնավորող աղեղնավորը, նետ ու աղեղից բացի, ձեռքում բռնել է գավազան, որը Շիրակացու մոտ նույնպես նշվում է իբրև անձրև նշանավորող աստղ։ Աղեղնավորին ուղեկցում է ջրային մի թռչուն, որն անկասկած պատկանում է իրեն, շեշտելով նրա կապը ջրի հետ։ Եղջերուի ձագերը գնում են, ամենայն հավանականությամբ, իրենց մոր ետևից։ Վերջինիս ընդառաջ է լողում ձուկը, ըստ երևույթին, ընդգծելով նրա ջրային էությունը։ Մինչև XIX դարը հայերի հավատալիքներում եղջերուն կապվում էր փոթորկի ու ջրի հետ և վեր էր ածվում վիշապի[30]։ Սրանք, անկասկած, նախնադարյան կրոնական պատկերացումների ու հավատալիքների մնացորդներ են, որ դարերի ընթացքում պահպանվել են սերունդների մեջ գրեթե անփոփոխ։

Շիրակացին գրում է. «Շնաստղը, Խողովակը, Վաքն, Ծիծառն սայլն, միւս սայլն, մարզոնն. կարճնգեաց, ճոկանոտն, ջրբաշխն, խոզն, Անդիաքն, Արկաւղն... աստեղք են, որ ցուցանեն զանձրևաց սաստկություն»[31]։ Այս վկայությունը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ մեր գոտու վրա պատկերված արջը, թռչունը, վարազը, ձուկը, կարճնգեացը (գավազան) անձրևի

28 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 331—332։
29 Նույն տեղում։
30 «Ազգագրական հանդես», գիրք Ա, Շուշի, 1895, էջ 351։
31 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 331—332։

գաղափարն արտահայտող աստղերն են։ Այդ առումով էլ հետաքրքիր է, որ գոտու վրա պատկերված ոչ ջրային կենդանիներից (առյուծը, եղջերուն, վարազը, արջը, այծեղջյուրը) յուրաքանչյուրը ուղեկցվում է ջրային կենդանիով (բադ, ձուկ, ջրասամույր)՝ հաստատելու համար նրա կապը ջրի հետ։ Հավանաբար, սափորն ու գավաթն էլ, որ բռնել են իրար դիմաց նստած երկվորյակները, իրենցից ներկայացնում են «ջրաբաշխը» (ջրհոսը)։

Գոտու ստորին շարքի մյուս կեսում կիպ իրար կողքի նստած են երկվորյակները, ժայռապատկերներից արդեն ծանոթ ձեռքերի շարժումով և հայացքով հետևում են ձիանման կենդանուն։ Քանի որ վերին շարքում երկվորյակներից միայն մեկն է ձիով, ուստի պետք է ենթադրել, որ նրանք նպատակ ունեն տիրելու երկրորդ ձիուն ևս։ Իսկապես, հաջորդ տեսարանում երկուսն էլ հեծած են ձիերին, և նրանցից յուրաքանչյուրին ուղեկցում է մի աստղ։

Գոտու վերջին տեսարանում խաչաթև աստղով (կամ արեգակով) մնացած պատկերներից բաժանված են արջը, բադը, այծեղջյուրը և ձուկը։ Այծեղջյուրի յուրաքանչյուր ոտքից կախված են երեքական շրջանակ (ոտքից կախված շրջանակ ունեցող կենդանիների պատկերներով բրոնզե գոտիներ հայտնի են նաև Սևանի ավազանից։ Դրանց սյուժեն ևս կապված է վիշապների, ջրի ու երկնային տարերքի հետ)[32]։ Շրջանակների ընդհանուր թիվը տասներկու է, գուցե համապատասխանելով տարվա ամիսների թվին։ Հնարավոր է մտածել նաև, որ դրանք պարզապես խորհրդանշում են այծեղջյուրի համաստեղությունը, որը, ըստ Շիրակացու, ունի երեք աստղ։

Այսպիսով, գոտին, ամբողջությամբ արտահայտելով անձրևի գաղափարը, կապվում է պտղաբերության պաշտամունքի հետ։ Չէ՞ որ երկվորյակներն էլ, իբրև անձրև առաջացնող էակներ, համարվել են առատություն ու լիություն ստեղծողներ։ Երկվորյակների հետ լիության, առատության գաղափարի կապը արտահայտված է նաև Շիրակացու մոտ. «Երկավորին, յորում են աստեղք երկու, եթե տեսանիցես զնոսա ի լուծ ուղղորդ, գիտես թե մեծամեծաց կորուստ գայ և տղայոց յախտից մահ. բայց տարին լի և պտղաբեր լինի»[33]։

Սամթավրոյի երկրորդ գոտին № 211 դամբարանից է (աղ. II, 11)[34]։ Այն, ցավոք, խիստ վնասված է։ Գոտին ունի նախորդի նման զարդանախշեր։ Կենդանիներն այստեղ ևս ներկայացված են երկու շարքով։ Պատկերները քառաթև երկու խաչով բաժանված են երեք խմբի։

Առաջին խմբի վերին շարքում պատկերված են արջառ, սագ, այծիկ, մի այլ թռչուն, որը շատ նման է Հայաստանի մ. թ. ա. II հազ. գունազարդ խեցեղենի վրա հանդիպող ջրային թռչուններին։ Ստորին շարքում շան նմանվող կենդանի է, նրան հաջորդում է առյուծը, հետո պատկերված է երկու այծ, որոնց նետահարում է այս խումբը եղրափակող, գոտու լայնությամբ մեկ տեղավորված աղեղնավորը, որի առջևում իր իսկ աստղի նշանն է։ Նրան հետևում են քառաթև լուսատուն և նրա տակ գտնվող երկվորյակները՝ գավազանը ձեռքներին։ Սրանցից հետո պատկերված է մի խոշոր եղջերու։ Մնա-

32 Հ. Ռ. Իսրայելյան, Պաշտամունքն ու հավատալիքը..., նկ. 46։

33 Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 331։

34 Ն. Ուրուշաձե, նշվ. աշխ. (գոտիներն այստեղ ներկայացված են Ուրուշաձեի վերականգնությամբ)։

ցած կենդանիների պատկերները շարժվում են հակառակ ուղղությամբ։ Դրանք են՝ արջանման մի կենդանի, թռչուն, արջ՝ պատկերված պտույտի ժամանակ, դիրքը փոխելիս, հաջորդ կենդանին հավանաբար փոքր արջն է ուղղվելու պահին կամ էլ՝ պարզապես, երկնային ծովի վիշապը։ Սրանց երկրորդ շարքում տեղավորված են երկար պոչերով երկու ջրշուն, երկու ձուկ և մի թռչուն (արագիլ)։ Այնուհետև նույն քառաթև աստղն է, որի տակ դարձյալ պատկերված են աղեղնավորին կրնկափոխ հետևող երկվորյակները։ Աղեղնավորն այս անգամ հետապնդում է փախչող եղջերուներին։

Այս գոտու վրա կայծակը խորհրդանշող կենդանիներն են՝ այծերը, եղջերուները, արջառը (ցուլը)։ Մնացած կենդանիները և գավազանը անձրև խորհրդանշող աստղեր են։ Երկու արջերը կարող են Շիրակացու նշած Մեծ և Փոքր արջերի համաստեղությունները ներկայացնել։ Ջրաշները, ձուկը, արագիլը շեշտում են իրենցից վեր գտնվող կենդանիների անձրևաբեր աստղեր լինելու հանգամանքը։

Եթե նախորդ գոտում երկվորյակները հետապնդում էին կայծակ առաջացնող եղջերուներին, ապա այստեղ՝ հետևում են աղեղնավորին։ Երկու դեպքում էլ նրանց դերը նույնն է՝ անձրև առաջացնելը։ Աղեղնավորը, որսորդ լինելով հանդերձ, ինչպես ցույց տրվեց վերևում, մարմնավորում է փոթորկի, վատ եղանակի գաղափարը։

Հետաքրքիր է երկվորյակների գլխավերևի խաչաձև աստղը։ Վերջինս, հավանաբար, արևի խորհրդանիշն էր, որով և ընդգծվում է նրանց կապը արևի հետ, որ խիստ բնորոշ է նաև հնդեվրոպական երկվորյակներին։ Նրանք արևի եղբայրներն են, որդիները կամ ամուսինները։ Նույնը դիտվում է մեր էպոսում։ Չէ՞ որ վիշապասպան Սանասարի փրկած Քառսուն ոուզ Դեղձուն Սամը ինքը արևն է[35]։ Նրանց ամուսնությունից էլ ծնվում է նույնպես արևի աստված Մհերը։ Սակայն այս գոտու վրա ուշագրավն այն է, որ արջը (կամ վիշապը) պատրաստվում է կլանել խաչ-արևը, համաձայն մեր նախնիների այն պատկերացումների, որ անձրև գալուց առաջ վիշապը կուլ էր տալիս արևը և հակառակը՝ անձրևի դադարելու համար պետք է սպանվեր վիշապը, որպեսզի ազատվեր արևը[36]։

Այս առումով հետաքրքիր է Սամթավրոյից գտնված բրոնզե երրորդ գոտին (աղ. II, 12), որը կարծես ավելի շուտ առասպելական սյուժե ունի։ Գոտին իր նախշերով (պարույրներ, զիգզագներ, անկյունավոր գծեր) նման է նախորդներին և կապված է ջրի, կայծակի ու երկնքի սիմվոլիկայի հետ։ Գոտու վրա պատկերված են ձկներ, թռչուններ, կխտարներ, եղջերուներ, մարդակերպ երկու էակներ-երկվորյակներ, որոնք այստեղ զինված են նետ ու աղեղով։ Նրանցից մեկը նետահարում է կխտարներին, մյուսը՝ եղջերուներին։ Նետաձգությունը, ըստ երևույթին, կամ պետք է իմաստավորել իբրև զոհաբերություն, որը կատարում էին նաև իրենք՝ աստվածները, որևէ նպատակ իրագործելուց առաջ, կամ իբրև նրանց կողմից կատարվող մոգական մի արարողություն։ Սպանելով բնության տվյալ երևույթը մարմնավորող կենդանուն, նրանք, նախնադարյան գաղափարաբանության համաձայն,

35 Մ. Արեղյան, Հայ ժողովրդական վեպը, «Ազգագրական հանդես», հատ. 1, Թիֆլիս, 1908, էջ 13։

36 Л. Р. Израелян, Наскальные изображения Армении и семантика некоторых композиций, էջ 6։

կարող էի առաջացնել այդ նույն երևույթը (անձրև կամ երաշտ, փոթորիկ կամ արևոտ եղանակ և այլն)։ Նետաձգության մոգական այս արարողությունը գիտվում է մեր քննարկած բրոնզե երեք գոտիների վրա։

Ի տարբերություն նախորդ երկու գոտիների, այստեղ հայտնվում է օձի և մի քանի անգամ կրկնվող գայլեր-շների զույգը։ Ուսումնասիրություններից հայտնի է, որ բացի ձիուց, երկվորյակ աստվածների կենդանակերպ դրսևորումներից մեկն էլ դայլն էր[37]։ Գոտու մի ծայրում նախնադարյան նկարիչը պատկերել է երկու ձուկ՝ բերանի մոտ օղակով։ Մյուս ծայրում՝ դեպի օղակը լողացող ձկների վրա հաչելով հարձակվող դիրքում պատկերված են գայլեր-շները։ Սրանց նույն զույգը հանդես է գալիս և գոտու երկրորդ կեսում՝ ռոմբաձև նախշի շուրջը, որն, անկասկած, որոշակի իմաստ ունի և կապված է գոտու ընդհանուր սյուժեի հետ։ Ռոմբի վերին մասում գայլեր-շների երկու զույգերի միջև ձուկ է՝ բերանին նույն օղակով և ճառագայթավոր մի շրջանակ (աստղ կամ արև)։ Վերին և ստորին զույգերի միջև մի կողմից թռչուն, մյուս կողմից օձ են պատկերված։ Վերջինիս մոտ է շտապում մի այլ թռչուն։ Լուսատուների շորս խորհրդանիշերը ընդգծում են պատկերված էակների երկնային բնույթը։ Գոտու հենց այս հատվածում էլ դրսևորվում է սյուժեի առասպելական էությունը, որտեղ մի կողմից կարելի է վեր հանել երկվորյակների եղանակակարգիչ հատկությունները, մյուս կողմից՝ անձրև առաջացնելու համար արևի ծածկվելու, կուլ գնալու հետ կապված մեր նախնիների պատկերացումները։ Արևի կուլ գնալու և նրա աղատագրման մոտիվը, ինչպես բացահայտել է Մ. Աբեղյանը, իր վառ արտահայտությունն է գտել «Սասնա ծռերում»՝ Սանասար-Բաղդասարի առասպելներում։ Դրանցից մեկում նրանք սպանում են աղամանդ-արևը կուլ տված վիշապին և աղատում արևը նրա երախից։ Վիշապին սպանելու պահին Պղնձե քաղաքի վրա հորդ անձրև է տեղում։ Ըստ երևույթին, նման մի մոտիվ էլ արտահայտում է քննարկվող գոտու սյուժեն։

Ձկների և օձի բերանի օղակը, հնարավոր է ենթադրել, որ նույն աղամանդ-արևն է պատկերում։ Հիշենք, որ Հայկական լեռնաշխարհում բնակվող մեր նախնիները վիշապներին պատկերացնում էին ձկների և օձերի կերպարանքով։ Այնպես որ, այստեղ օղակը բերանին սողացող օձի և նրանից այն կարծես խլել պատրաստվող թռչունի տեսարանը գուցե և արտացոլում է վիշապի կողմից աղամանդ-արևը կուլ տալու գաղափարը։ Թռչուններն այս կոնտեքստում կարող էին խորհրդանշել ինչպես երկինքը, այնպես էլ ամպրոպ-կայծակը։ Նրանք ևս շտապում են ծածկել արևը, անձրև առաջացնել։

Հակառակ սրանց, գայլեր-շների զույգն այստեղ հարձակվող դիրքում է, օղակով ձկան հանդեպ և արտահայտում է Սանասար-Բաղդասարի կողմից արևը վիշապից աղատելու դրվագին նման մի մոտիվ։ Այդ նպատակի համար մարդ-երկվորյակները կերպարանափոխվել են գայլերի։ Տարբեր հանգամանքներում աստվածների զանազան կերպարանքներ ընդունելու հատկությունները խիստ բնորոշ էին նախնադարյան մտածողությանը։

Մենք չենք բացառում նաև այն հանգամանքը, որ գոտու վրա պատկերված գայլեր-շները կարող էին լգի և աբուի զույգ ներկայացնել և այս դեպքում էլ, սակայն, մարմնավորել ամպրոպ-կայծակի, հետևաբար և անձրևի

37 Л. Штернберг, նշվ. աշխ., էջ 79—81։

երևույթը[38], դրանով իսկ կապվելով բազմացման, պտղաբերության պաշտամունքի հետ։

Քննարկելով բրոնզե այս երեք գոտիների պատկերները, կարելի է մտածել, որ դեռևս մ. թ. ա. XI—X դդ. դրանք կրում էին քրմերը կամ կախարդները՝ անձրև առաջացնելու ծիսական արարողությունների ժամանակ։ Շատ հնարավոր է նաև, որ այդ գոտիները ծառայել են աստղագուշակներին իբրև օրացույց՝ անձրևների սկսվելու, տևողության ու դադարի հաշվումներն անելու համար։ Առաջին երկու գոտիներին մոտիկ պատկերներ ունեն Վրաստանում և Օսեթիայում գտնված բրոնզե մի շարք գոտիներ, որոնց սյուժեների վերլուծության ժամանակ հավանաբար պետք է ելնել այս տեսանկյունից։

Քանի որ երկվորյակներն իրենց էությամբ կապված էին ջրի գաղափարի հետ, աշխարհի տարբեր մասերում նրանց վերագրվող գերեզմանները սարքվում էին գետերի և լճերի ափերին՝ մշտապես խոնավ լինելու համար։ Երաշտի օրերին դրանք ջրվում էին՝ անձրև առաջացնելու միտումով։

Երկվորյակների պաշտամունքի շուրջը մեր կատարած դիտողությունները հանգեցնում են այն համոզման, որ Հայաստանում բազմիցս հանդիպող. Թուխ մանուկ կոչվող հուշարձանները, որոնք գրեթե բոլոր դեպքերում գտնվում են սրբազան աղբյուրների կամ գետակների մոտ, սկզբնապես՝ հայ հեթանոսական շրջանում, վերագրվում էին երկվորյակ աստվածների՝ Թուխ մանուկների գերեզմաններին։

Մեր այս ենթադրությունը կարող է հաստատել Դվինի մի դամբարանի վրա դրված սալաքարը՝ վրան քանդակված մարդկային զույգ էակների ռելիեֆ պատկերներով։ Նրանք ունեն տարածած ձեռքեր, շատ նման ժայռապատկերների՝ նույն կեցվածքում գտնվող երկվորյակներին, այն տարբերությամբ միայն, որ կրում են սրածայր գդակներ և զերծ են լուսատուներ խորհրդանշող նշաններից (սալը գտնվում է Հայաստանի ազգագրության թանգարանում)։ Թուխ մանուկների շատ հատկանիշների քննարկումը (որը այս հոդվածում հնարավոր չէր զետեղել), համոզում է, որ դրանք լիովին համապատասխանում են մեր բրոնզեդարյան երկվորյակների, ինչպես նաև հընդկական Աշվինների կերպարներին։ Քրիստոնեության ազդեցության տակ, հեթանոսական այլ աստվածների նման, նրանք մոռացության են տրվել, թողնելով միայն իրենց անունները դարերի ընթացքում կառուցված մատուռների ու դրված խաչքարերի վրա, իսկ նրանց մոգական կարողությունները վերագրվել են դրանց մոտ գտնվող աղբյուրներին ու ծառերին։

Անդրադառնալով երկվորյակների գերեզմանները ջրերի մոտ գտնվելու հանգամանքին նկատենք, որ, բացի վերը նշված պատճառից, մեր կարծիքով, դա կապված էր նաև իր ժամանակին գոյություն ունեցած այն գաղափարի հետ, թե երկվորյակները ոչ միայն ծնվում էին ջրում, այլև մահանում էին այնտեղ։ Իզուր չէ, որ ըստ շատ ժողովուրդների հավատալիքների, երկվորյակ

38 Վրացական բանահյուսության մեջ անգղի ձվից (արև, լուսին) ծնված Կուրշա շունը իր բոլոր հատկանիշներով՝ անձրևարեր ամպ խորհրդանշող սև գույնով, ամպրոպի նմանվող հաչոցով, լուսին-աչքերով և օձանման հոնքեր-կայծակներով, սերտորեն կապվում է ամպրոպ-կայծակի և ջրի հետ։ Նույնն է մարմնավորում և սպիտակ շուն Թափիեն, որի ականջը փայլում է ինչպես կրակ, ամպրոպը նրա հաչոցն է, արցունքը՝ հորդառատ անձրև (մեկնաբանումը մերն է—Հ. Ի.). տե՛ս Н. Вирсаладзе, Грузинский охотничий мир и поэзия, М., 1976, էջ 112, 183։

երեխաներին չէր թույլատրվում դետին մոտենալ, որպեսզի նրանք չվերափոխվեն ձկան կամ ընդմիշտ չգնան գետի հատակը։

Այսպիսով, ծայռապատկերներում և կիրառական արվեստի այլ հուշարձանների վրա հանդիպող երկվորյակների պատկերների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք պատկերվում էին մոդական նպատակներով և որ Հայկական լեռնաշխարհում այդ աստվածություններին վերագրվող հատկությունները մեծ ընդհանրություններ ունեին ողջ հնդեվրոպական աշխարհի երկվորյակ աստվածությունների հետ։

Հարկ է շեշտել նաև, որ երկվորյակներին վերաբերող առասպելական մոտիվների նմանությունը հայկական էպոսում և վեդայական հիմներում՝ հնարավոր են դարձնում ճշտելու «Սասնա ծռերի» մի շարք առասպելների վերջնական ձևավորման ժամանակաշրջանը՝ մ. թ. ա. II հազարամյակ։

Հայկական լեռնաշխարհում երկվորյակների պաշտամունքը հարատևում է բրոնզի դարի հաջորդ փուլերում և Վանի թագավորության ողջ ժամանակաշրջանում, թափանցում հայ հեթանոսական կրոնի ոլորտները՝ մարմնավորվելով Թուխ մանուկների կերպարում։

СЛЕДЫ КУЛЬТА БЛИЗНЕЦОВ В ДРЕВНЕЙ АРМЕНИИ

Кандидат историч. наук А. Р. ИСРАЕЛЯН

(Резюме)

В статье рассматривается ряд наскальных изображений Сюникских и Гегамских гор II тыс. до н. э. и бронзовые пояса из Самтавро XI—X вв. до н. э., которые на основе комплексного исследования дают возможность выявить следы культа божественных близнецов на Армянском нагорье во II тыс. до н. э. Среди разных функций, приписываемых близнецам, главное место занимает вызывание дождя и регулирование погоды. В наскальных изображениях Армении близнецы представлены как небесные существа—светила или как созвездие в сопровождении знаков неба, солнца, луны и светил, а также животных, символизирующих гром-молнию и воду (бык, коза). В наскальном солнечно-лунном календаре близнецы изображены со змеями-молниями в сцене вызывания дождя. На первых двух бронзовых поясах из Самтавро зодиакальные близнецы передвигаются по небосводу вместе с означающими проливной дождь звездами (изображенными в виде разных животных и водяных птиц) и стрельцом, олицетворяющим бурю. Вполне возможно, что первые два пояса, имея магическое значение, употреблялись в качестве своеобразного календаря для вычисления начала, продолжительности и окончания сезона дождей. На третьем самтавроском поясе представлена мифическая сцена борьбы перевоплощенных в пару волков-собак близнецов с вишапом (=рыба, змея), поглощающим солнце-жемчужину (=кольцо). Почитание близнецов у армянских племен продолжалось до конца эпохи бронзы, сохранилось в период Ванского царства, откуда и проникло в армянскую языческую среду и воплотилось в образе тух-мануков, «смуглых юношей»—смельчаков.